Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Հովտամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի / I դասարանի՝ մաթեմատիկա-4, մայրենի-7, և տեխնոլոգիա-2, ընդամենը՝ 13 ժամ / թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ Ն մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3*4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ
- §Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից 15^{00} -ը, բացի հանգստյան օրերից:

Մրցույթը կկայանա սույն թվականի **հոկտեմբերի 16-ին՝ ժամը 14:00-ին,** Հովտամեջի միջնակարգ դպրոցում: Հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ Հովտամեջ, փ. Մաշտոցի 1:

Տեղեկությունների համար զանգահարել(095)22-15-25 հեռախոսահամարով: